Այս ամէն կընդրուի նա և թէ Մեղուի և թէ Մշակի Խմբագրութիւններէն, զի որքան կարելի է՝ ջանան իւրեանց հրատարակութեանց մէջ զգուշութիւն և ընտրութիւն գործածել, և մի՛ անօգուտ վէճեր՝ յուզմունքներ՝ և անուանարկութիւնք գրգռել:

## ԲԱԳՈՒԱՑ ՄԱՐԴԱՍԻՐ. ԸՆԿԵՐՈՒԹԵՆԷ

Բագուայ Մարդասիր. Ընկերութեան Խորհրդարանէն խնդրուած է հետեւեալն հրատարակութիւնը Արարատ ամսագրոյ մէջ եւս:

### Հաշիւ մտից և ելից գործոց պատկանելոց Մարդասիրական Ընկերութեան յանուն Սրբոյն Գրիգորի Ի. Լուսաւորչին վասն 1873 ամի:

#### ՄՈՒՏՔ

| | Ռ. | Կ. |
|---|---|---|
| Առ 1 ն Յունվարի 1873 ամի Ընկերութիւնն ունէր բաց ի շինութեան, տպարանի եւ մուրհակներով ապառիկ ստանալի դրամոց, զուտ գումար | 5784 | 42 |
| Երկրորդ փոխարինութեան 5⁰\₀ բիլէթներ 42 հատ, հաշուելով իւրաքանչիւրն 105 մանէթ 50 կոպէկից, ընդ ամենը | 4702 | 50 |

#### ԵԿԱՄՈՒՏ ՅԸՆԹԱՑՍ 1873 ԱՄԻ

| | Ռ. | Կ. |
|---|---|---|
| Նորոգ դաւալ 13 անփոփոխ անդամներից | 1400 | |
| » » 17 տարեկան անդամներից | 95 | |
| Տպարանական արդիւնք, սկսեալ ի 1էն Յունվարի մինչ ցԼ ն Մարտի 1873 ամի | 46 | 64 |
| Սկսեալ ի 1էն Մարտի մինչ ցԼն Յունվարի 1874 ամի, Ընկերութեան պատկանեալ տպարանից, որ տուած էր պարոն Աստուածատուր Թարվիրզեանցին վարձու, իւրաքանչիւր տարի 550 մանէթով,—ստացաւ | 450 | |
| Ընկերութեան աշակերտուհեաց ձեռագործների վիճակախաղութիւնից, որ եղեւ հարցաքննութեան օրն, մտաւ արդիւնք | 204 | 25 |
| Առանձին ընծայաբերութիւն յօգուտ Ընկերութեան, բարերար անծանօթէն, ընդ ամենը | 95 | |
| Ընկերութեան պատկանեալ շինութեանց՝ այս ինքն մէկ պոդվալից վարձ | 24 | |
| Յընթացս 1873 ամի տոկոսիք զուտ դրամից՝ այս ինքն 5784 մանէթից | 700 | |
| Ընկերութեան պատկանեալ 43 հատ խաղարկական բիլէթներից տոկոսիք | 575 | |
| Ընդ ամենը | 13877 | 81 |

#### ԵԼՔ ՅԸՆԹԱՑՍ 1873 ԱՄԻ

| | Ռ. | Կ. |
|---|---|---|
| Օրիորդաց Ուսումնարանի երկու վարժապետաց Ռուսաց եւ Հայոց լեզուի տարեկան վարձ | 457 | 41 |
| Ուսումնարանի պահապանին | 60 | |
| Տպարանն մինչ ցկապալաւ տալն, վարձու ունեցած գրաշարներին տուած է չհատուցած վարձն | 100 | |
| Տպարանական ծախս է եղած, մինչ ցԼն Մարտի 1873 ամի | 33 | 60 |

| | | |
|---|---|---|
| Օրիորդաց ուսումնարանի աշակերտուհեաց ձեռագործի համար, զանազան իրեր գնվեցաւ | 83 | 21 |
| Պարգեւաբաշխութիւն ուսուցչաց Օրիորդաց ուսումնարանի . . . | 65 | 50 |
| Գնեցաւ Էջմիածնայ տպարանից 10 եւ 12 առոհմանի տառեր Ընկերութեան տպարանի համար իւր ճանապարհի ծախսովն . . . . | 367 | 20 |
| Վասն 1871 ամի. օրիորդաց ուսումնարանի համար վարձեալ տան քրեհ տուաւ պարոն Կրասիլնիկեանցին . . . . . | 525 | |
| Խորհրդարանի գործավարական ծախս եւ ուսումնարանի վառելեաց . . | 72 | 65 |

### ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՈՐԴԵԳԻՐՆԵՐԸ

| | | |
|---|---|---|
| Ա.) Միքայէլ Տէր Յովհաննէսեանցին՝ որն ուսանում է Ս. Պետերբուրգի կայսերական Մեդիկօխիրուրգիչեսկի Ակադեմիայումն . . . . | 450 | |
| Բ.) Այրի կին Հայուհի Գատիանայ Միլեանսկուն՝ որն ուսանում է Ս. Պետերբուրգի կայսերական մանկաբարձութեան ճեմարանումն . . . . | 180 | |
| Գ.) Շամախեցնակ Ներսէս Աբելեանցին՝ որն ուսանում է Բագուայ գիմնազիայումն . | 400 | |
| Դ.) Ղազախու գաւառի վերին Աղդան գեղջ բնակիչ Սարգիս Միրզայեան Մէհրապեանցին՝ որն ուսանում է Մոսկվայի կայսերական Տեխնոլոգիչեսկի ուսումնարանումն . | 75 | |
| Նպաստ Բագուայ գիմնազիայումն աղքատ ուսանող աշակերտաց . . | 403 | 96 |
| Աղքատ աշակերտաց Ծխական ուսումնարանի եւ աշակերտուհեաց օրիորդական ուսումնարանի դասագրքեր բաշխվեցաւ . . . . | 22 | 5 |
| Փոստայի եւ հեռագրի ծախք . . . . | 15 | 56 |
| Ընկերութեան պատկանեալ շինութեան կարկատանաց . . . | 3 | 55 |
| Ընդ ամենը | 2242 | 29 |
| Մնում է առ 1ն Յունվարի 1874 ամի առ ձեռն պատրաստի զուտ գումար . | 6963 | 2 |
| Խազարկական բիլէթներ 45 հատ , . . . | 4702 | 50 |
| | 11665 | 52 |
| Ընդ ամենը | 15877 | 81 |

Գանձապետ ԳՐԻԳՈՐ ԹՈՒՄԱՅԵԱՆՑ

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿՔ ԲԻՒԶԱՆԴԵԱՆ.

### ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ
### ԱՒԵՏԻՔ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԱՅՈՑ Կ. ՊՈԼՍՈՅ.
### (Շարունակութիւն):

Նոյն տարի վախճանեցաւ Եղիազար կաթողիկոս. Դ օր առաջ ազդմամբ Սուրբ Հոգւոյն ծանեաւ զմահն, վանօրէից զեպիսկոպոսունք ժողովեաց և կարգաւորք և աղքատք, բազում ողորմութիւնս բաշխեաց, ժամուց պատարագի մինչ Դ օր. երրորդում առաւօտուն ինքն մատոյց ըզսուրբ պատարագն, ճաշակեաց զմարմին և զարիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի մերոյ, և օրհնեաց Նահապետ վարդապետն Կաթողիկոս և օծեաց միռոնաւ և նստոյց ի աթոռն իւր, և օրհնեաց զՓափն Հռոմա և զքրիստոնէից թագաւորքն և բարեպաշտ իշխանք զօրքն զինվորքն